

2. Ս. ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ, Կրոնակեղեցական լեզվական միավորների քննություն, Ս. Էջմիածին, 2002, 74 էջ:

Կրոնակեղեցական լեզվական միավորների քննությունը մեզանում հասկանալի պատճառներով տասնամյակներ շարունակ անտեսվել է: Հոգևոր ոլորտի բառերը հանգամանորեն և պատշաճ մակարդակով ներկայացվել են հայերեն հին և նոր տարբեր բառարաններում: Կարելի է ասել, որ ցայսօր եղած աշխատանքները բառարանագրական խնդիրներից այն կողմ չեն անցել:

Մինչդեռ հայագիտության համար չափազանց կարևոր է հոգևոր-կրոնական ոլորտի միավորների **լեզվական քննությունը**. այն է՝ բացահայտել այդ միավորների իմաստաբանությունը, թեմատիկ խմբերը, բառակազմական կաղապարները, դարձվածակազմիչ դերը, բնիկ և փոխառյալ շերտերը, պարզել ստուգաբանությունը, ածանցելիական ու բառաբարդման հնարավորությունները և այլն:

Եվ այդօրինակ աշխատանքի լույսընծայումը չուշացավ: Վերջերս հրատարակվեց Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի բանասիրության ամբիոնի վարիչ, դոցենտ Դավիթ Գյուրջինյանի ուշագրավ աշխատանքը՝ «Կրոնակեղեցական լեզվական միավորների քննություն»՝ մեկենասությամբ թեհրանաբնակ Ալբերտ և Վարդուհի Զարգարյանների: Գրքույկը նվիրված է Ամենայն Հայոց երջանկափառ առաջնորդ Գարեգին Առաջինի ծննդյան 70-ամյակին:

Կրոնակեղեցական լեզվական միավորների քննությունը գրախոսվող աշխատանքում կատարվում է տարբեր տեսանկյուններով՝ անվանագիտական, իմաստաբանական, բառակազմական, դարձվածաբանական և այլն: Դ. Գյուրջինյանն իր աշխատանքով վերհանում է կրոնակեղեցական ոլորտի լեզվական միավորների բառակազմական իմաստաբանության ինչպես օրինաչափությունները, այնպես էլ յուրահատկությունները:

Հեղինակն ամենայն մանրամասնությամբ քննում է **հայկական վանքերի անունները**: Նա վանքանունների ուսումնասիրությունը կատարում է դրանց բառակազմական և իմաստաբանական կողմերի բացահայտմամբ. անվանադրման սկզբունքների պարզաբանումով, դրանց առնչվող ավանդությունների մեկնաբանությամբ ու ժողովրդական ստուգաբանությամբ և բարդության բաղադրիչների ներքին շարահյուսական հարաբերությունների ցուցադրումով: Վանքանունների այսօրինակ ուսումնասիրությունը ձեռք է բերում ինչպես լեզվաբանական, այնպես էլ պատմագիտական, մշակութային և ճանաչողական կարևոր նշանակություն:

Այնուհետև, քննության առարկա են դառնում եկեղեցական-հոգևոր կյանքին առնչվող **կացարանների** հայերեն անվանումները: Հեղինակը նախ պարզաբանում է կրոնական բովանդակություն ունեցող կացարանների հայերեն

անվանումների գործածության ժամանակաշրջանը՝ այդ անվանումների ի հայտ գալը կապելով քրիստոնեության մուտքի հետ. «5-րդ դարի գրավոր հուշարձաններում չեն պահպանվել նախաքրիստոնեական շրջանին՝ հեթանոսությանը վերաբերող կացարան նշանակող բառեր» (էջ 14): Այսպես, V դ. հայերենում են վկայվել *վանք, կուսաստան, մենանոց/միայնանոց, մենարան/միայնարան, մենաստան/միայնաստան, միանձնանոց, եղբայրանոց, եպիսկոպոսանոց* բառերը, որոշ բառեր էլ գործածվել են գրաբարի հետագա շրջաններում՝ *կաթողիկոսարան, եպիսկոպոսարան, պատրիարքարան*, միջին հայերենում՝ *աբ(բ)այանոց, աբեղայանոց, առանձնոց*, համեմատաբար նոր շրջանի կազմություններ են՝ *առաջնորդարան, աբեղայարան, վեհարան, եպիսկոպոսատուն, աբբայարան* և այլն (էջ 18-19):

Դ. Գյուրջինյանը քննում է կրոնական բովանդակություն ունեցող կացարանների բառաիմաստային խումբը և առանձնացնում *վանք* հիմնաբառով սկսվող հոմանշային բազմանդամ շարքը՝ կացարանի յուրաքանչյուր անվանման մեջ ցույց տալով այն անվանելու հիմունքը: Այսպես, կացարանի տեսակ է *մենաստանը*, որովհետև նրա բնակիչները հոգևորական մենավորներ են (*մենանոց/միայնանոց, մենավորանոց/մենավորաստան, մենաստան/միայնաստան, միանձնանոց* և այլն), *կուսանոցը*, որի բնակիչները միանձնուհիներ՝ կույսեր են (*կուսաստան, կուսարան, կուսավանք*), *կրոնավորանոցը*, որի բնակիչները կրոնավորներ են (*կրոնավորաստան, կրոնավորական կայան, տուն կրոնավորաց*) և այլն (էջ 14-15): Բառաիմաստային քննվող խմբի մեջ հեղինակը գետնադրում է նաև այն բառերը, որոնք նշանակում են հոգևորականների, եկեղեցու սպասավորների բնակարան, կացարան-պաշտոնատուն՝ նստավայր՝ *սարկավազատուն, քահանայատուն, երիցատուն, եպիսկոպոսարան, պատրիարքարան, մետրոպոլիտարան* և այլն: Հեղինակը այս բառերի իմաստային-թեմատիկ խմբերը քննելուց հետո տալիս է դրանց նույնանիշների շարքերը, ածանցման և բառաբարդման կաղապարները, կրած իմաստափոխությունը, բազմիմաստությունը, փոխաբերական իմաստները, բնիկ և փոխառյալ շերտերը և այլն: Համոզված կարող ենք ասել, որ այս բաժնում կրոնակեղեցական ոլորտի կացարանների լեզվական քննությունը տրված է ամբողջական և սպառիչ կերպով:

Աշխատության հաջորդ բաժնում հեղինակը քննում է *Քրիստոս* բաղադրիչով կազմությունները: Այստեղ երևում է հայերենի բառակազմական ճկունությունն ու ճոխությունը. քրիստոնեության մուտքից սկսած՝ *Քրիստոս* բաղադրիչով կազմվեցին բազմաթիվ բառեր (շուրջ 8 տասնյակ), որոնք արտահայտում են Քրիստոսի վարդապետության ամենատարբեր հասկացություններ՝ կապված Քրիստոսի անվան հետ: Դ. Գյուրջինյանն այդ կազմությունները խմբավորում է՝ *գրաբարյան* բառեր՝ *ոսկեդարյան, քրիստոսաբեր, քրիստոսադիր, քրիստոսագգեստ, հետոսկեդարյան, քրիստոսառաք, քրիստոսապահեստ, միջինհայերենյան, քրիստոսագեղ, քրիստոսախնամ, քրիստոսահիմն,*

աշխարհաբարյան. **քրիստոսանենգ, քրիստոսընդդեմ, քրիստոսաշավիղ** և այլն (էջ 24):

Այս կարգի բաժանումը պատմական բառագիտության և պատմական իմաստաբանության խնդիրներից է. հեղինակը օգտաշատ գործ է կատարել՝ բացահայտելով **Քրիստոս** բաղադրիչով կազմությունների (պատճենումներ, նորակազմություններ) ժամանակագրությունը: Այսօրինակ դասակարգման համար Դ. Գյուրջինյանն ուսումնասիրել է գրաբարալեզու բոլոր հեղինակների մատյանները, դրանց համաբարբառները, համեմատական խարիսխ նետել գրաբարի հիմնարար բառարաններին՝ ՆՀԲ և Առձեռն բառարան, քննադատական մոտեցումով զննել նրանց վկայությունները՝ հաճախ ճշտելով այս կամ այն միավորի բառակազմության ժամանակը (տե՛ս **քրիստոսանման, քրիստասակիր, քրիստոսահին, քրիստոսաշեն** բառերի մասին հրապարակի վրա եղած բառարանների վկայությունները և հեղինակի դիտողությունները (էջ 24-25)):

Դ. Գյուրջինյանը կատարում է նաև **Քրիստոս** բաղադրիչով որոշ բարդությունների իմաստային սրբագրումներ. հմմտ. **քրիստոսադավ ազգ** (փոխ. **քրիստոսադավան**) (էջ 27):

Հեղինակը ցույց է տալիս, որ **Քրիստոս ու Աստված** և **Քրիստոս ու Հիսուս** բառերի հոմանշությունը հիմք է դարձել նմանակությամբ բառեր ստեղծելու, ինչպես **աստվածապաշտ-քրիստոսապաշտ, աստվածասեր-քրիստոսասեր, քրիստոսադավան-հիսուսադավան, քրիստոսաձիր-հիսուսաձիր** և այլն (էջ 28-29):

Աշխատանքի հաջորդ բաժնում հեղինակն անդրադառնում է հայերենի բառակապակցական իմաստաբանությանը և ցույց տալիս, որ **Քրիստոս** և **Աստված** բառերը գործուն դեր են ունեցել հայերենի կայուն կապակցություններում (և դարձվածային տարբերակներում): **Քրիստոս** բաղադրիչով կապակցությունները քննվում են երկու պլանով՝ *ոչ փոխաբերական նշանակությամբ (հավատ ի Քրիստոս, հավատ առ Քրիստոս)* և *դարձվածային արժեքով (Քրիստոսի խաչակից, հավատացյալ ի Քրիստոս, Քրիստոսի ժառանգակից* և այլն):

Հեղինակը ցույց է տալիս նաև դարձվածային միավորի բազմիմաստությունը՝ մատնանշելով տարբեր նրբիմաստներ (հմմտ. **Քրիստոսի զինվոր** - 1. քրիստոնյա, 2. ով զենք է դարձրել Քրիստոսի խոսքը, 3. ով մարտնչում է Քրիստոսի և նրա հավատի համար: **Քրիստոսի ծառա** - 1. ով ենթարկվում է Քրիստոսի ուսմունքին, 2. ով ծառայում է Քրիստոսի գործին, հավատին): Այստեղ բերվում են մի շարք կապակցություններ, որոնք առ այսօր բառարանային գրանցում չեն ստացել, ինչպես՝ **Քրիստոսի պաշտոնյա, Քրիստոսի սպասավոր, Քրիստոսի դեսպան, Քրիստոսի փոխանորդ**, բոլորն էլ «կրոնավոր, հոգևորական» նշանակությամբ, **զնալ՝ երթալ առ Քրիստոս** «մեռնել, երկնային թագավորություն ընկնել» և այլն:

Հայերեն դարձվածանիի մեջ մեծ կշիռ ունեն նաև **Աստված** բաղադրիչով ձևավորված կայուն կապակցությունները, որոնք հանդես են գալիս բազմազան տարբերակներով: Դ. Գյուրջինյանը հանգամանորեն քննում է **Աստված**

բաղադրիչով կապակցությունների տարբերակայնությունը՝ առանձնացնելով դարձվածային հետևյալ տարբերակները՝ *քանակային (Աստված պահի//Աստված ողջ պահի//Աստված ողջ ու առողջ պահի)*, *բառային (հոմանշային) (Աստված//Տերը քեզ հետ, փառք Աստծո//Տիրոջը//Բարձրյալին//Ամենակալին)*, *քերականական (Աստծո փեշերը//փեշը բռնել, Աստված ինձ//քեզ/նրա//իր//մեզ//ձեզ հետ)*, *շարադասական (Աստված տա//տա Աստված, մարդ Աստծո//Աստծո մարդ)* և այլն:

Հեղինակը փաստորեն ձևափաստային քննության է ենթարկում *Աստված* բաղադրիչով կայուն կապակցությունների խմբերը և նրանց ներսում բացահայտում բառակապակցական սերիչ կաղապարներ ու դարձվածային մի շարք տարբերակներ:

Դոցենտ Դ. Գյուրջինյանն իր աշխատության վերջին բաժնում քննում է կրոնական ոլորտի այն բառերը, որոնք բառակազմորեն «ամուլ» են: Հայերենի բառակազմությանը նվիրված ամենատարբեր աշխատություններում գրեթե ուշադրություն չեն դարձրել այն հանգամանքին, որ լեզվում կան բառեր, որոնք բառակազմական տեսակետից չեզոք են, այսինքն՝ անարդյունավետ, մեկուսի: Այս քննությունը կարևորվում է նրանով, որ «բառակազմորեն մեկուսացած բառերի ցանկերի ստեղծումը կնպաստի հայերեն բառակազմական օրինաչափությունների մասին համապարփակ պատկերացում կազմելուն, շնորհիվ որի հնարավոր կլինի որոշակի ճշգրտումներ մտցնել բառապաշարի ներքին դասակարգման մեջ» (էջ 63):

Խնդիրը միաժամանակ գիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, թե բառակազմորեն չեզոք բառերը լեզվի զարգացման որ փուլից են գալիս, թեմատիկ-իմաստային ինչպիսի խմբերի են պատկանում, խոսքիմասային ինչ արժեքներ ունեն, ինչ գործոններ են խանգարել դրանց բաղադրելիությանը և, վերջապես, բնի՞կ, թե՞ փոխառյալ բառեր են:

Դ. Գյուրջինյանը քննել է կրոնանկեղեցական ոլորտի բառակազմորեն «ամուլ» բառերը՝ խնդրի ամբողջական քննությունը թողնելով առանձին ուսումնասիրության¹: Կրոնական բովանդակություն ունեցող «ամուլ» բառերը քննվել են ժամանակային լայն ընդգրկումով՝ հին հայերեն մատենագրությունից մինչև բառարանագրական վկայությունները՝ շուրջ 1500-ամյա փաստական նյութի ընդգրկումով: Հեղինակն այդ կարգի բառերը խմբավորել է ըստ կրոնական ուսմունքներին առնչվելու հատկանիշի և տարբերակել հետևյալ շերտերը՝ 1. *նախաքրիստոնեական*, որի մեջ զետեղում է այն բառերը, որոնք վերաբերում են հին հայոց կրոնին՝ հեթանոսությանը (*մեհյան, մարգարե, զոհ, հրեշտակ*), և *գրադաշտությանը (բարսմունք, ջատուկ, պետմոգ, մագդեզն, քեշ)*, 2. *քրիստոնեական (քահանա, արեղա, սերովրե, սատանա, քուրմ,*

¹ Հեղինակն այդ կարգի քննություն կատարել է բառափմաստային մեկ այլ խմբում. տե՛ս Հայերենի բառակազմորեն «ամուլ» բուսանունների մասին (ըստ գրաբարի և միջին հայերենի նյութի) (ԲԵՀ, 2000, հ. 3, էջ 105-109):

օվսաննա, սադայել), 3. *մահմեդական (մինարա, դուրան, մոլլա, մզկիթ)*, 4. *բուդդայական (հինայա, մահայա, ստուպա, պագոդա, նիրվանա)* և այլն:

Դ. Գյուրջինյանն իրավացիորեն նկատում է, որ այդ բառերից շատերը բառակազմորեն մեկուսացած են մնացել, և փորձում է ցույց տալ այն գործոնները, որոնք «նպաստել են» այդ հանգամանքին: Նա այդ գործոններից մատնանշում է բառի գործածական ոլորտի սահմանափակությունը, իմաստային չպատճառաբանվածությունը, հայերեն համարժեքի առկայությունը, բառ կազմելու հասարակական պահանջմունքի բացակայությունը, փոխատու լեզվում դրա ոչ բառային բնույթը, հոգեբանական ազդակները և այլն:

Ինչպես նկատելի է, գրախոսվող աշխատությունն ունի առանձին բաժիններ, որոնք միևնույն թեմայի օրգանական մասեր են՝ կապված ներքին տրամաբանությամբ: Վերլուծությունների ընթացքում հեղինակը սահուն անցում է կատարում հետազոտվող թեմայի մի բաժնից մյուսին՝ այդպիսով կատարելով խնդրո առարկայի ամբողջական և համակողմանի քննություն:

Մեկ-երկու նկատառում. գրաբարյան *մծղնեայ* բառի կողքին կարելի է հիշել նաև *բորբորիտ*-ը, որը իմաստային-թեմատիկ նույն խմբին է պատկանում (աղանդի անուններ են) և բառակազմորեն ամուլ է: Կարծում ենք՝ *խուց* բառի բառակազմական ճյուղավորումները կարելի էր շարունակել՝ վկայակոչելով այլ բառեր ևս, ինչպես՝ *նավախուց, բանտախուց, տեսախցիկ, բեռնախցիկ, վագոնախցիկ, խցակից* և այլն:

Դոցենտ Դ. Գյուրջինյանի «Կրոնաեկեղեցական լեզվական միավորների քննություն» աշխատանքը այսօրինակ հետազոտության առաջին փորձն է մեզանում. այն լիովին հաջողված ուսումնասիրություն է և կարևոր ներդրում հայերենի բառակազմական իմաստաբանության բնագավառում: Աշխատությունը որոշակի նպաստ է բերում նաև պատմական բառագիտությանն ու իմաստաբանությանը, անվանագիտությանը և դարձվածաբանությանը: Անշուշտ, Դ. Գյուրջինյանը կշարունակի իր բանասիրական որոնումներն այս մարզում:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Լ. Մ.

Բանասիրական գիտությունների դոկտոր